

ՀԷՔԵԱԹ

ՇԱՀՄԻՐԱՆ - ՎԻՇԱՊԸ

ԵՒ

ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒՆԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

ԱՌԱՅ Բացառութեան բոլոր մարդիկ երկար ապրելու տենջանք մը ունին, փափաք մը՝ որ քանի ծերանալու մօտեան անջնջան բուռն կը դառնայ իրենց մէջ: Տարիներով անկողին գամուած հաշմանդամը, քաղցկեղի ճիւղաններուն մէջ սուր ցաւերու ենթակայ մահամերձը, կ'ուզեն անպայման քանի մը տարիներ եւս քաշկուտել իրենց տառապալից կեանքը, ինչ փոյթ թէ անտանելի ցաւերու և անհանդուրժելի անշարժութեան տակ կը տուայտին:

Աշխարհի սկիզբէն մինչեւ մեր օրերը, այս եղած է ծնող ու ապրող բոլոր մարդոց միակ խաչալը, ապրիլ երկար:

Երկարակեցութեան համար դարման փնտռողներ ալ եղած են ու աշխատած դարերու ընթացքին, գտնելու դեղ մը, միջոց մը, որ գոհացում տար մարդ էակին այս անպարտելի ըզմանքին, բայց ցարդ ապարդիւն անցած են բոլոր ջանքերը:

Ներկայ դարուս առաջին քառորդէն սկսեալ, բժշկական աշխատանքներուն մէջ բուռն թափով կը հետապնդուի գտնել կեղծ մը, գոնէ քանի մը տարիներ աւելցնելու մարդկային կեանքին վրայ, և կրնանք վստահութեամբ ըսել թէ այս ուղղութեամբ իրենց աշխատանքը պսակուած է կատարելապէս: «Սուրճամիտ»ներու, «Փենիսիլինի»-ի, «Միսին»-ու «Միսի»-թին»-ներու գիւտը, յեղաշրջող արդիւնքներ տուած է, և ապագան մեծ յոյսեր կը վերապահէ տակաւին երկարելով կեանքը քանի մը տարիներ և ազատելով սուր ու փոխանցիկ հիւանդութեանց ենթակաները, ստոյգ մահուընէ:

Ներքնահոս գեղձերու հոյզերէն պատրաստուած դեղերը, յամառող հիւանդուն թիւնները արագութեամբ բուժելով, ոյժ ու առնականութիւն կը պարգեւէ հաշմանդամներու և անդամալոյծներու և միեւնոյն ատեն կ'երկարէ անոնց կեանքը:

Հին օրերու փորձառական արուեստի տէր բժիշկներ, որոնք հետամուտ էին նման արդիւնքներ ձեռք ձգելու, չկարողացան յաջողութեամբ պսակուիլ այս մարգերուն մէջ: Բայց արդի գիտութիւնը, շնորհիվ վերոյիշեալ դեղերուն, գաւազանիքը երկարելու կեանքը, առնուազն տասը, տասնհինգ տարիներ:

Հինքը ոչ միայն աշխատած են երկարակեցութեան դեղ մը գտնելու, այլ տքնած են նաեւ միջոց մը հնարելու՝ ծերացած մարդը երիտասարդացնելու համար: Այս մասին շատ մը զրոյցներ ու ՀԷՔԵԱԹՆԵՐ կ'աւանդուին մեր ծերերու բերնով, որուն ամէնէն ուշագրաւն է, Տարսոնի պատմութեամբը:

Առենօք Տարսոնի մէջ հայազգի Լօգման անունով բժիշկ մը կ'ապրէր, որ բովանդակ կիլիկիոյ մէջ մեծ հռչակ հանած էր: Լօգման բնիկ ՄԻՍԻՍցի էր, ԶԱՀԱՆ գետի աջ ափին վրայ շինուած հին քաղաքի մը բնակիչներէն: Պատկուց հովիւ ըլլալով իր ոչխարները կ'արածէր գետին երկու եզերքներուն վրայ «ՆՈՒՐ ՏԱՂ»-ի ստորոտները և հսկայ «ԵՐԼԱՆ ԳԱԼԵ»-ի շրջակայքը: ԵՐԼԱՆ ԳԱԼԵ, ԿԻԼԻԿԵԱՆ հայ իշխանութեան անառիկ հին բերդերէն մէկն է, որ պատմութեան մէջ լեռնկայ կը կոչուէր, իսկ այժմ ծանօթ է ԵՐԼԱՆ ԳԱԼԵ կամ ՇԱՀՄԻՐԱՆ ԳԱԼԵ - Վերապարեղանուններով: ԼՕԳՄԱՆ, կ'արածէր իր հօտը դաշտային ԿԻԼԻԿԵԱՆ այս աննման բլրակներու, հովիտներու մէջ, ուր բնութիւնը շռայլօրէն կանաչներու մէջ պարուրած էր դաշտերը ու ձորերը: Կարծես այս երկրամասը բժշկական բուսաբանութեան յա-

1951

1951

Մարտ-Ապրիլ

69

տուկ պարտէզ մը ըլլար, ուր ՄՐՏԵՆԻՆ իր անուշ բուրմունքովը, ՄԵԿՈՆԸ, ՄԵԽԱԿԸ, ԱՆԱՆՈՒԽԸ իրենց խնկաբոյր հոտերովը զիրար կը գերազանցէին, ԿԱԹՆԻՍԸ, ԶԱՄԲՈՒՐԸ ու ՄԵՂՈՒԱԾԱԳԻԿԸ զիրար գրկած էին, իսկ արնագոյն ԿԱԿԱԶը, գեղին ու կանաչ ԳԱՓՆԵՎԱՐԳը, դաշտագետինը իսկական դրախտի վերածած են: ԶԱՀԱՆ գետէն մինչեւ ՍԱՐՈՍԻ հովիտը, Լեռնկայէն մինչեւ ՍՍՈՅ ԲԵՐԳԻՆ ստորոտը, թուփերով, մարգերով ու այլազան տեսակի ծաղիկներով ծածկուած էր ՄԻՍԻՍ շուրջ բոլորը, ուր ԼՕԳՄԱՆ իր հօտին հետ կը շրջագայէր գիշեր ու ցերեկ: Ան իւրաքանչիւր բոյսի, թուփի ու ծաղիկներու վրայ հետաքրքիր, ժամերով կը հաշուէր, կը փնտէր անոնց թերթիկները, ափին մէջ կը ճզմէր զանոնք, զանազանելու համար անոնց արտադրած այլազան բոյրերը և կը քննէր մարդուս մոլորթին վրայ անոնց թողած ազդեցութիւնները: Վերջապէս նկատի կ'առնէր միջատներու, սողուններու և իր ոչխարներուն խոտերու ու ծաղիկներու հանդէպ հակումները, բայց միշտ իրեն համար անլուծելի գաղտնիք մը կը մնար պարագայ մը՝ թէ երբ ոչխարները հիւանդ ըլլային, զանազանութիւն կը դնէին իրենց կերած բոյսերուն վրայ, այդ պահերուն կ'ուտէին ընտրաբար մի միայն ծանօթ անի ինչ խոտը և կամ կը կրծէին որոշ թուփի մը կեղեւները:

ԼՕԳՄԱՆ նման խոտերու ու թուփի կեղեւներուն ու արմատներուն առանձնաշատկութիւնները իր ոչխարներուն վրայ փորձելով, հետզհետէ կը տիրանար փորձառական բժշկութեան հիմնական տարրերուն, զանոնք կիրարկելու համար ապագային մարդոց հիւանդութիւններուն դէմ:

Տարիներ յետոյ երբ զգաց իր մէջ թէ ալ կրնար բժիշկի դերը գործնականապէս կատարել, ձգեց հովուութիւնը և սկսաւ հիւանդներ դարմանել: Անունը հետզհետէ կը տարածուէր ԿԻԼԻԿԵԱՆ մէջ, իբր կարող

հէքիմ, ան զացած հաստատուած էր ՏԱՐՍՈՆ:

Ամբան շող օր մը, ԼՕԳՄԱՆ լեռնկայի կողքին տերեւներ ու հունտեր կը հաւաքէր և դուրս կը հանէր բժշկութեան մէջ գործածութիւն թուփերու և տուրկերու արմատները: Յետ միջօրէի, խոնջէնքէն պարտաւած, ապաստանեցաւ բերդին պարիսպներուն հովանուտ խոռոչներէն մէկուն մէջ. անզգալաբար խոր քունի մը մէջ ինկաւ ու ժամերով քնացաւ: Երբ արթնցաւ, արդէն արեւամուտը մօտ էր. անմիջապէս իր հաւաքած բոյսերուն տոպրակը անութիւն տակ առած՝ դուրս եկաւ խոռոչէն: Բայց հնարիւ տեսարան մը պարզուեցաւ իր աչքին. Բերդի վերապահներու թագուհին ՄԱՀՄԻՐԱՆ զուլիւր վեր ցցած մարդաչափ հասակով կանգնած էր իր դէմ...

ՇԱՀՄԻՐԱՆ, զլիւր շարժումով մը հրամայեց ԼՕԳՄԱՆին հետեւիլ իրեն, որ դողդողալով հնազանդեցաւ անոր՝ ելլելով մինչեւ բերդին գագաթը, ուրկէ անցան գետնափոր բաւիղէ մը ընդարձակ սրահի մը մէջ: Հոս ՇԱՀՄԻՐԱՆ վերապահ հանդարտեցնելէ յետոյ ԼՕԳՄԱՆը, սկսաւ բժշկական գաղտնիքները մէկիկ մէկիկ հաղորդել, բացատրելով բոյսերուն, ծաղիկներուն, արմատներուն բուժիչ յատկութիւնները և ծանօթացնելով իւրաքանչիւրին որոշ հիւանդութեանց համար գործածելու եղանակները. առաւելապէս ծանրացաւ օձի թոյնին բուժիչ հանգամանքին վրայ, որոնք մահացու կարծուած հիւանդութիւններն անգամ կրնային բուժել:

Նոյնպէս բացատրութիւններ տուաւ օձի թոյնէն պատրաստուած հիւթի մը մասին, որ կրնար ծերերը երիտասարդացնել, երբ անոնց մարմինը յօշոտուելէ ու կտոր կտոր ջարդուելէ յետոյ՝ այդ հիւթէն սրսկուի անոնց անշնչացած դիակին վրայ, և թէ այդ հիւթին ազդեցութեանը տակ ծերը

երիտասարդացած, կենդանութիւն կը ստանայ:

ՇԱՀՄԻՐԱՆ, նման բժշկական գաղտնիքներ հաղորդելէ յետոյ, ԼՊԳՄԱՆին կը յանձնէ օձի թոյներէն պատրաստուած լեցուն սրուակ մը, որ կընար երկու ծերեր երիտասարդացնել:

ՇԱՀՄԻՐԱՆ սրուակը ԼՊԳՄԱՆին յանձնելէ յետոյ ըսաւ. «Առ այս սրուակը, գնահատեալ ճիշդ գետնափոր բաղնիք մը կայ, այդ տեղ կը տանիս այն ծերերը որ երիտասարդացնել կ'ուզես: Հոն մարմարիոնէ յատակին վրայ կտոր կտոր կը յօշոտես անոնց մարմինները, յետոյ սրուակին մէջ գտնուող հիւթը կը սրսկես կտրատուած միկաններուն և ոսկորներուն վրայ, և ահա մարմինն այդ կտրատուած մասերը անմիջապէս իրարու միանալով երիտասարդացած կը վերակենդանանան: Այս գործողութիւնը կատարելու պահուդ ես հոն քովդ կը գտնուիմ: Լեւոնկայի այս բերդէն գաղտնի գետնափոր ճամբայ մը կայ, որ կ'երկարի մինչեւ Տարսոնի այդ բաղնիքը, ուր շաբաթը անգամ մը լոգնալու կ'երթամ»:

Այս բացատրութիւնները տալէ յետոյ ՇԱՀՄԻՐԱՆ կը հեռանայ սրահէն: ԼՊԳՄԱՆ սրուակը առնելով անմիջապէս կը վերադառնայ Միսիս և առանց ժամանակ կորսնցնելու իր ծեր ծառային հետ կը մեկնի Տարսոն, փորձելու համար օձի թոյնէ պատրաստուած դեղին ազդեցութիւնը և յառաջ գալիք հրաշքին արդիւնքը:

ՏԱՐՍՈՆի գետնափոր բաղնիքը մինչեւ հիմա կանգուն կը մնայ, կը գտնուի քաղաքին կեդրոնը, հազիւ հարիւր մեթր հեռու ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲԵՐՈՆԱՅԻ աթոռանիստ Ս. ՍՈՓԻԱ Մայր Տաճարէն — այժմ Ուլու ճամբի —:

Բաղնիքը փոքր, բայց նուրբ ճարտարապետութեամբ կառուցուած շէնք մըն է,

գետնէն տասը աստիճաններով ցած իջնող արեւմտեան պատին կողքը քերելով կ'անցնի ԿԻՒԳՆՈՍ գետին մէկ ճիւղը, խորունկ ու լայն:

ԼՊԳՄԱՆ իր ծառային ընկերակցութեամբ կէս գիշերուան մօտ կ'անցնի Տարսոնի փողոցներէն և կը մտնէ գետնափոր բաղնիքը, հետը առած ՇԱՀՄԻՐԱՆի սրուակը և մարմին յօշոտելու գործընկեր: Բաղնիքի մէկ խցիկին մէջ առանձնացած, ԼՊԳՄԱՆ մանրամասնօրէն կը պատմէ աշակերտին այն հանդիպումը զոր ունեցած էր լեւոնկայ ԲԵՐԳԻՆ մէջ ՇԱՀՄԻՐԱՆ վիշապին հետ: Կը պատմէ նաեւ բոյսերու և հիւանդութիւններու մասին անոր տուած հրահանգները, և վերջապէս ծերերը երիտասարդացնելու նպատակով օձի թոյներէն պատրաստուած հեղուկի մասին ալ բացատրութիւնները կու տայ իր աշակերտին: և կը համոզէ զայն որ առաջին հերթին փորձարկութեան ենթակայ ըլլայ ինքը և երիտասարդանայ:

Աշկերտը համակերպեցաւ վարպետին այս առաջարկին և ենթարկեց ինքզինքը անոր հանրաժանօթ հմտութեան, մեծ վստահութեամբ մը:

ԼՊԳՄԱՆ, անմիջապէս գործի անցնելով կը յօշոտէ ու կտոր կտոր կ'ընէ ծառային մարմինը՝ բաղնիքի ճերմակ մարմարիոնին վրայ, արեան ճապաղիքներու մէջ թաթխուած: Այս ցնցող տեսարանէն անզգայ կը բանայ սրուակին բերանը ու կը սկսի սրսկել օձի թոյնէն պատրաստուած հեղուկը, յօշոտուած միսի ու ոսկորի կտորներուն վրայ: Եւ ահա, ո՛վ զարմանք, կտրատուած մարմինը ներդաշնակօրէն իրարու զօդուելով, ծառան կը սկսի կենդանութեան նշաններ ցոյց տալ և քանի մը վայրկեան վերջ արդէն ոտքի կը կանգնի երիտասարդացած, կայտառ ու աշխոյժ:


Կ'անցնին քանի մը շաբաթներ. ԼՊԳՄԱՆ առաջին օրերը հպարտութեամբ կը դիտէր

իր ծառային երիտասարդացած, գեղեցկացած գոյափոխութիւնը որ իր հմտութեան ու ճարտարութեան արդիւնքն էր. բայց հետզհետէ նախանձի թոյնը կը սկսի եռալ իր երակներուն մէջ, ինքն ալ կ'ուզէր երիտասարդանալ, վայելել աշխարհը և ծառայել երկար տարիներ մարդկութեան, իր գիտութեամբ և իր փորձառութեամբ ամբարած ծանօթութիւններով:

ՇԱՀՄԻՐԱՆ վիշապին տուած սրուակին պարունակութեան կէսը գործածած էր իր ծառային համար, մնացած կէսն ալ պիտի բաւէր իրեն. ուրեմն կը մնար սպասաւորին բացատրել յօշոտումի գործողութիւնը և հեղուկին գործածութեան եղանակը: ԼՊԳՄԱՆ կրկին անգամ յիշեցնելով ծառային բոլոր ծանօթութիւնները և բացատրելով զանոնք մանրամասնօրէն, որ մը կէս գիշերին կը մտնեն միասին նոյն գետնափոր բաղնիքը ու կ'անցնին ծանօթ խցիկը:

Բաղնիքին մէջ ինքն ու ծառան միմեկին: ԼՊԳՄԱՆ ծառային կու տայ յօշոտումի դանակը և կը խրախուսէ որ անմիջապէս սկսի գործողութեան: Երկար տատանումներէ յետոյ, ծառան առաջին հարուածով ԼՊԳՄԱՆին գլուխը իրանէն կ'անջատէ և արեան մէջ լողացող տիրոջը մարմինը կտոր կտոր կը ջարդէ բաղնիքի սպիտակ սալայտակին վրայ և իրարու վրայ կը դիզէ: Այս յանդուգն ու սրտակեղեք գործողութիւնը կատարելէ յետոյ կը բանայ սրուակը և կը սկսի սրսկել հեղուկը յօշոտուած միսի ու ոսկորի կտորներ վրայ: Քանի մը վայրկեան յետոյ զարմանքով կը տեսնէ անջատուած զլիւն միանալը անոր իրանին, շարժումը՝ կուրծքին տկար շնչառութեամբ մը և աչքերուն բացուելը: ԼՊԳՄԱՆ տկար և աղերսարկու ձայնով հազիւ լսելի, կը քաջալերէ ծառան կրկնելով շարունակ ԼԻՅ, ԼԻՅ, ԼԻՅ:

Այս սահմակցուցիչ ու տագնապալից



Լեւոնկայի բերդը «Շահմիրան Գալէ»
լուսանկարուած 1944-ին

պահուն, յանկարծ աներեւոյթ ուժգին հարուածէ մը ցնցուած ծառան լարձուն մարմարիոնին վրայ կը տապալի, և ձեռքի սրուակը՝ մէջի հեղուկովը ջարդ ու փշուր կ'ըլլայ սալայտակին վրայ: Օձի թոյնին հեղուկը կը խառնուի բաղնիքի տաք ջուրերուն հետ և կը հոսի խցիկէն դուրս արիւնին հետ միանալու կոյուղին մէջ:

ՇԱՀՄԻՐԱՆ էր որ գետնափոր անցքէն դուրս ելած իր թեւերովը այդ ծանր հարուածը տուած էր ԼՊԳՄԱՆի ծառային:

Ծառան խելակորոյս, մերկ, բաղնիքէն դուրս կը նետուի օգնութիւն պոռալով, մինչ անդին ԼՊԳՄԱՆ աղերսարկու նախաձեռնով և տկար ձայնով կը կանչէր իր ծառային ԼԻՅ, ԼԻՅ, ԼԻՅ:

Դեռ մինչեւ այսօր, ատեն ատեն, Տարսոնի այդ գետնափոր բաղնիքին մէջ աղեկտուր ձայն մը կը լսուի, տամուկ ու գոլրըշխապատ գէջ օդին մէջէն, ԼԻՅ, ԼԻՅ, ԼԻՅ:

ԼՊԳՄԱՆի ոգին է որ կ'աղերսէ ծառային:

Տղթ. Յ. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Հալէպ